Social Security

Դուք ինչ պետք է իմանաք, ծերության կամ կերակրողին կորցնելու հետ կապված նպաստներ ստանալիս

2012թ.

www.socialsecurity.gov

Կապվեք Սոցիալական Ապահովության վարչության հետ

Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստներ ստանալու համար,
- ծանոթանալ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության անձնական հաշվետվությանը*),
- գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցէն.
- պահանջել Medicare-ի նոր քարտ և
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները.

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

Զանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքից օգտվելուց կարող եք նաև զանգահարել մեզ անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Որպես կանոն, զանգահարողներն ավելի կարճ են սպասում, եթե զանգահարում են շաբաթվա մեջ երեքշաբթիին հաջորդող օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ: Եթե Դուք խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Բովանդակություն

Ներածություն 4

Ձեր նպաստների մասին. 4

Մեր կողմից առաջարկվող ծառայությունները. . . 7

Դուք ինչ տեղեկատվություն պետք է
ներկայացնեք մեզ 8

Աշխատելը եւ միեւնույն ժամանակ
Սոցիալական ապահովություն ստանալը. 16

Այլ կարեւոր տեղեկատվություն 20

Խոսք Medicare-ի մասին 24

Ներածություն

Սույն գրքույկը բացատրում է ծերության կամ կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստներ ստանալու ձեր որոշ իրավունքները եւ պարտականությունները:

Մենք առաջարկում ենք, որպեսզի ժամանակ տրամադրեք հիմա եւ կարդաք սույն գրքույկը եւ այնուհետեւ դնեք ապահով տեղում, որպեսզի կարողանաք ապագայում անդրադառնալ դրան:

Եթե դուք ստանում եք նաեւ Լրացուցիչ սոցիալական եկամուտ (SSI), ապա դիմե՛ք մեզ *What You Need To Know When You Get Supplemental Security Income* (*Դուք ինչ պետք է իմանաք, եթե դուք ստանում եք Լրացուցիչ սոցիալական եկամուտ*, Հրապարակում թիվ 05-11011, հասանելի է միայն անգլերեն լեզվով) հրապարակումը ստանալու համար:

Ձեր նպաստների մասին

Երբ եւ ինչպե՞ս են վճարվում ձեր նպաստները

Սոցիալական ապահովության նպաստները վճարվում են ամեն ամիս՝ դրանք հասանելիք դարձած ամսվան հաջորդող ամսում՝ օրինակ, հուլիսի համար ձեր նպաստները դուք ստանալու եք օգոստոսին: Սովորաբար, նպաստի վճարումը ստանալու ամսաթիվը կախված է այն անձի ծննդյան օրից, որի հասույթի հաշվառմամբ դուք ստանում եք ձեր նպաստները: Օրինակ, եթե դուք ստանում եք նպաստներ որպես կենսաթոշակի անցած աշխատող, ապա ձեր նպաստը որոշվելու է ձեր ծննդյան ամսաթվով: Եթե դուք ստանում եք նպաստներ ձեր ամուսնու (կնոջ) աշխատանքի հիման վրա, ձեր նպաստի վճարման օրը որոշվելու է ձեր ամուսնու (կնոջ) ծննդյան ամսաթվով:

Ծննդյան ամսաթիվը	Նպաստները վճարվում են ամեն ամվա՝
1-ից - 10-ը	երկրորդ չորեքշաբթի օրը
11-ից - 20-ը	երրոդ չոթեքշաբթի օրը
21-ից - 31-ը	չորորդ չոթեքշաբթի օրը

Եթե դուք ստանում եք Սոցիալական ապահովության եւ SSI-ի նպաստներ, ապա ձեր Սոցիալական ապահովության վճարումը կհասնի ամսի երեքին, իսկ ձեր SSI-ի վճարումը կհասնի ամսի մեկին:

Էլեկտրոնային վճարումներ

Սոցիալական ապահովության նպաստների համար դիմելիս՝ Դուք պետք է որ գրանցվեիք՝ Ձեր վճարումներն էլեկտրոնային տեսքով ստանալու համար: Եթե չեք գրանցվել, ապա, խնդրում ենք, անհապաղ արեք դա հիմա: Դուք պետք է անցնեք էլեկտրոնային վճարումների մինչև 2013թ. մարտի 1-ը: Հակառակ դեպքում, ԱՄՆ ֆինանսների նախարարությունը՝ վճարումների ընդհատումից խուսափելու նպատակով, կարող է Ձեր նպաստներն ուղարկել Direct Express® քարտային համակարգով:

Անկանխիկ փոխանցումները նպաստ ստանալու պարզ և ապահով եղանակ են: Դիմեք Ձեր բանկին, և այն կօգնի գրանցվել այդ ծառայության համար: Մենք նույնպես կարող ենք օգնել գրանցվել անկանխիկ փոխանցումների համար:

Մյուս տարբերակը Direct Express® քարտային ծրագիրն է: Direct Express®-ի միջոցով դաշնային կառավարությունից վճարվող գումարը փոխանցվում է ուղղակիորեն քարտային հաշվին: Կարող եք շատ հեշտ և արագ գրանցվել՝ քարտ ստանալու համար: Զանգահարեք Ֆինանսների նախարարության էլեկտրոնային վճարումների կապի կենտրոնի անվճար հեռախոսահամարով՝ **1-800-333-1795:** Կարող եք նաև գրանցվել առցանց՝ ***www.GoDirect.org*** կայքում: Սոցիալական ապահովության վարչությունը նույնպես կարող է օգնել գրանցվել:

Երրորդ տարբերակը Էլեկտրոնային փոխանցումների հաշիվն է: Դաշնային կառավարության կողմից ապահովագրված այս մատչելի հաշիվը հնարավորություն է ընձեռում ապահով, անվտանգ և հարմարավետ կերպով ինքնաշխատ վճարումներ ստանալ: Դուք կարող եք կապվել մեզ հետ կամ այցելել մեր կայքը՝ ***www.eta-find.gov***՝ այս ծրագրի մասին տեղեկատվություն ստանալու համար, կամ՝ Ձեր մոտակայքում գտնել խնայողական կամ վարկային բանկ կամ վարկային միություն, որն առաջարկում է նման հաշիվներ:

Եթե Դուք Ձեր նպաստը փոստով եք ստանում

Ապահովության համար դուք պետք է կանխիկացնեք կամ մուտքագրեք ձեր չեկը անչիջապես ստանալուց հետո: Դուք չպետք է ստորագրեք ձեր չեկը մինչեւ չհասնեք դրա կանխիկացման վայրը: Եթե դուք ժամանակից շուտ ստորագրեք եւ կորցնեք չեկը, ապա այն գտնող անձը կարող է կանխիկացնել այն:

Կառավարական չեկը պետք է կանխիկացվի 12 ամսվա ընթացքում չեկի ամսաթվից հետո կամ այն կդառնա առ ոչինչ: Մեկ տարի անց, եթե դուք դեռեւս ունենաք վճարը ստանալու իրավունքը, ապա մենք կփոխարինենք առ ոչինչ ճանաչված չեկը:

Եթե Ձեր վճարումն ուշանում է կամ չի կատարվում

Եթե Դուք Ձեր էլեկտրոնային վճարումը սահմանված ժամկետում չեք ստանում, անմիջապես զանգահարեք մեզ՝ **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով: Եթե Ձեր վճարագիրը չի վճարվում սահմանված ժամկետում, սպասեք երեք աշխատանքային օր՝ նախքան կորած վճարագրի մասին մեզ տեղեկացնելը: Վճարագրերի ուշացման ամենատարածված պատճառը հասցեի փոփոխությունն է, որի մասին մեզ տեղյակ չեն պահել:

Եթե նույնիսկ ձեր չեկը կորչել կամ գողացվել է, անմիջապես դիմե՛ք մեզ: Ձեր չեկը կարող է փոխարինվել, բայց դրա համար ժամանակ կպահաջվի:

Սխալ հասցեով ուղարկված նպաստների վերադարձումը

Եթե Դուք ստանաք էլեկտրոնային վճարում, որը նախատեսված չէ Ձեզ համար, դիմեք, որ Ձեր ֆինանսական հաստատությանը՝ այն ԱՄՆ ֆինանսների նախարարությանը վերադարձնելու: Ձեզ համար չնախատեսված վճարագիր ստանալու դեպքում, տարեք այն Սոցիալական ապահովության գրասենյակ կամ վերադարձրեք ԱՄՆ ֆինանսների նախարարությանը՝ վճարագրի ծրարի վրա նշված հասցեով: Վճարագրի առաջին էջի վրա պետք է գրեք “VOID” (անվավեր), և կցեք գրություն, որում նշված է վճարագիրը ետ ուղարկելու պատճառը: Եթե Դուք գիտակցաբար ընդունեք վճարումներ, որոնք նախատեսված չեն Ձեզ համար, Ձեր հանդեպ կարող է քրեական գործ հարուցվել:

Ձեր նպաստներից հարկեր վճարելը

Սոցիալական ապահովություն նպաստներ ստացողների մոտ մեկ երրորդը իր նպաստներից պետք է վճարի հարկեր: Եթե դուք ներկայացնում եք դաշնային հարկային հայտարարագիրը որպես «անհատ» եւ ձեր միացյալ եկամուտը 25.000 դոլարից ավելի է, ապա դուք պետք է վճարեք հարկեր ձեր նպաստներից: Եթե դուք լրացնում եք համատեղ հարկային հայտարարագիր, ապա դուք պետք է հարկեր վճարեք՝ եթե դուք եւ ձեր ամուսինը (կինը)

ունեք համատեղ եկամուտ, որը կազմում է 32.000 դոլարից ավելի: Եթե դուք ամուսնացած եք եւ լրացնում եք առանձին հարկային հայտարարագիր, ապա հավանաբար վճարելու եք հարկեր ձեր նպաստներից:

Դաշնային հարկերից ազատվելու նպատակով, դուք կարող եք ստանալ W-4V ձեւաթուղթը Հարկային վարչությունից, զանգահարելով մեր անվճար հեռախոսահամարով՝ **1-800-829-3676** կամ այցելելով մեր վեբ կայքը: Ձեւաթուղթը լրացնելուց եւ ստորագրելուց հետո վերադարձրե՛ք այն Սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակին՝ փոստով կամ առձեռն:

Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարե՛ք Ներքին եկամուտների ծառայության անվճար հեռախոսահամարով՝ **1-800-829-3676** եւ խնդրե՛ք Հրապարակում 554-ը՝ *Tax Guide for Seniors* (*Հարկային տեղեկատվություն տարեց ամերիկացիների համար*) եւ Հրապարակում 915-ը՝ *Social Security Benefits And Equivalent Railroad Retirement Benefits* (*Սոցիալական ապահովության նպաստները եւ երկաթգծի ծերության համարժեք նպաստները*):

Մեր կողմից առաջարկվող ծառայությունները

Սոցիալական ապահովության անվճար ծառայություններ

Որոշ ընկերություններ հայտարարում են, որ նրանք անվճար կարող են ապահովել անունների եւ ազգանունների փոփոխություններ կամ Սոցիալական ապահովության քարտեր: Այդ ծառայությունները անվճար մատուցվում են Սոցիալական ապահովության կողմից, ուստի մի՛ վճարեք անվճար բաների համար: Նախ զանգահարե՛ք մեզ կամ այցելե՛ք մեր վեբ կայքը: Սոցիալական ապահովության մասին տեղեկատվություն ստանալու լավագույն վայրը դա Սոցիալական ապահովությունն է:

Տեղեկատվության նորացումներ

Բավականաչափ հաճախ մենք ձեզ ուղարկելու ենք կարեւոր տեղեկատվություն Սոցիալական ապահովության ձեր նպաստների մասին, ինչպես օրինակ.

- Կենսապահովման նվազագույնի բարձրացմանը համապատասխան ճշգրտումներ. Եթե կենսապահովման նվազագույնը բարձրացել է, ապա Ձեր նպաստի չափն

ինքնաբերաբար կավելանա: Եթե Դուք Ձեր նպաստն ստանում եք անկանխիկ փոխանցմամբ, ապա նոր գումարի մասին մենք նախապես կծանուցենք Ձեզ: Եթե Դուք նպաստն ստանում եք վճարագրով, ապա մենք վճարագրին կից կուղարկենք գրություն՝ կենսապահովման նվազագույնի բարձրացմանը համապատասխան ճշգրտումների վերաբերյալ:

- Տարեկան եկամուտի սահմանափակում. Լրիվ թոշակային տարիքը դեռ չլրացած անձանց համար գործում է աշխատանքով գումար վաստակելու և սոցիալական ապահովության նպաստ ստանալու սահմանափակում: Այս գումարը սովորաբար փոխվում է տարեցտարի: Նոր գումարի մասին մենք Ձեզ կծանուցենք նախապես: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ 2012թ. սահմանափակման մասին, տես 16-րդ էջը:

Մենք ինչպես ենք ձեզ հետ կապ հաստատելու

Սովորաբար, ձեզ հետ կապ հաստատելիս, մենք ուղարկում ենք ձեզ նամակ կամ ծանուցագիր, բայց երբեմն Սոցիալական ապահովության ներկայացուցիչը կարող է գալ ձեր տուն: Նախքան ձեր նպաստների մասին խոսելը մեր ներկայացուցը ձեզ ցույց է տալու իր վկայականը: Եթե երբեւէ կասկածեք Սոցիալական ապահովության անունից ներկայացած անձին, զանգահարե՛ք Սոցիալական ապահովության գրասենյակ եւ հարցրե՛ք, թե արդյո՞ք նա ուղարկվել է ձեզ հանդիպելու համար: Եվ հիշե՛ք, Սոցիալական ապահովության աշխատակիցները որեւէ բան անելու դիմաց ձեզանից երբեք դրամ չեն խնդրելու:

Դուք ինչ տեղեկատվություն պետք է ներկայացնեք մեզ

Ձեր պարտականությունները

Կարեւոր է, որպեսզի 9-ից 15-րդ էջերում նշված փոփոխություններից մեկը տեղի ունենանալու դեպքում, հնարավորինս շտապ հայտնեք մեզ:

Ծանուցում. *Փոփոխություն չհայտնելը կարող է արդյունքում առաջացնել գերավճար: Եթե դուք գերավճարվեք, ապա մենք կգանձենք ձեզ ոչ հասանելիք ամբողջ գումարը: Միեւնույն ժամանակ, եթե դուք ժամանակին չհայտնեք փոփոխությունների մասին կամ միտումնաբար անեք*

կեղծ հայտարարություն, ապա ձեր նպաստները կարող են դադարեցվել: Առաջին խախտման համար ձեր նպաստները դադարեցվելու են վեց ամսվա համար, երկրորդ խախտման համար՝ 12 ամսով, իսկ երրորդի համար՝ 24 ամսով:

Տեղեկատվություն հայտնելու համար դուք կարող եք զանգահարել, գրել կամ այցելել մեզ: Ձեռքի տակ ունեցե՛ք ձեր պահանջագիրը: Եթե դուք ստանում եք ձեր նպաստները ձեր աշխատանքի հիման վրա, ապա ձեր պահանջագրի համարը նույնն է, ինչ ձեր Սոցիալական ապահովության համարը: Եթե դուք նպաստներ եք ստանում ձեր այլ անձի աշխատանքի հաշվառմամբ, ապա ձեր պահանջագրի համարը նշվելու է ձեր նպաստների մասին ձեզ ուղարկվող յուրաքանչյուր նամակում:

Ձեր կողմից կառավարական այլ գործակալությանը ներկայացվող տեղեկատվությունը կարող է տրամադրվել Սոցիալական ապահովությանը, բայց դուք պետք է փոփոխությունը հայտնեք նաեւ մեզ:

Եթե փոփոխվում է ձեր հաշվարկելի հասույթը

Եթե դուք աշխատում եք, ապա սովորաբար մենք խնդրում ենք հաշվարկել ձեր տարեկան հասույթը: Եթե հետագայում դուք հասկանաք, որ ձեր հասույթը լինելու է ձեր հաշվակածից ավելի բարձր կամ ավելի ցածր, ապա հնարավորինս շտապ հայտնե՛ք մեզ, որպեսզի մենք կարողանանք ճշգրտել ձեր նպաստները: Տես «Աշխատելը եւ միեւնույն ժամանակ Սոցիալական ապահովություն ստանալը» տես էջ 16-ը՝ ճշգրիտ հաշվարկ կատարելուն օգնելու համար:

Եթե դուք տեղափոխվում եք

Տեղափոխում պլանավորելիս, հայտնե՛ք մեզ ձեր նոր հասցեն եւ հեռախոսահամարը՝ անմիջապես դրանք իմանալուն պես: Նույնիսկ եթե դուք ստանում եք ձեր նպաստները ուղղակի ավանդի տեսքով, Սոցիալական պահովությունը պետք է ունենա ձեր ճշգրիտ հասցեն, որպեսզի մենք կարողանանք ձզե նամակներ եւ այլ կարեւոր տեղեկատվություն: Դուք կարող եք փոփոխել ձեր հասցեն մեր վեբ կայքում՝ ***www.socialsecurity.gov/onlineservices***: Կամ դուք կարող եք զանգահարե՛լ՝ **1 800-772-1213** հեռախոսահամարով եւ օգտվել մեր ավտոմատացված համակարգից:

Եթե նպաստներ ստացող ընտանիքի անդամները տեղափոխվում են ձեզ հետ, ապա խնդրվում է հայտնել մեզ նրանց անունները եւ ազգանունները: Երաշխավորե՛ք եք նաեւ, որպեսզի ձեր հասցեն փոփոխվի փոստի բաժանմունքում:

Եթե դուք փոփոխում եք ուղղակի ավանդի հաշիվները

Եթե դուք փոփոխում եք ֆինանսական հաստատությունները կամ բացում նոր հաշիվ, ապա դուք կարող եք իրական ժամանակի ռեժիմով փոփոխել ուղղակի ավանդը՝ եթե դուք ունենք ինքնությունը հաստատող անձնական համար եւ գաղտնաբառ: Կամ մենք կարող ենք փոփոխել ձեր ուղղակի ավանդի տեղեկատվությունը հեռախոսով՝ ձեր ինքնությունը ճշտելուց հետո: զանգելիս, ձեռքի տակ ունեցե՛ք ձեր հին ու նոր բանկային հաշիվների տեղեկատվությունը: Դրանք տպվելու են անձնական չեկերի կամ հաշիվներից քաղվածքների վրա: Այդ տեղեկատվությունը փոփոխելու համար պահանջվելու է 30-60 օր: Մի՛ փակեք ձեր հին հաշիվը մինչեւ չերաշխավորեք, որ ձեր Սոցիալական ապահովության նպաստները մուտքագրված են ձեր նոր հաշվին:

Եթե որևէ անձ ի վիճակի չէ տնօրինելու իր միջոցները

Որոշ մարդիկ ի վիճակի չեն տնօրինելու իրենց սեփական դրամական միջոցները: Նման դեպքերում անհրաժեշտ է տեղյակ պահել մեզ: Մենք կարող ենք հասցեագրել նպաստները նրա որևէ հարազատի, այլ անձի կամ կազմակերպության, որը համաձայն է գումարը տնօրինել նպաստառուի բարեկեցության համար: Այդպիսի անձանց կամ կազմակերպություններին մենք կոչում ենք «ստացող ներկայացուցիչներ»: Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք *A Guide For Representative Payees* («Ստացող ներկայացուցիչների ուղեցույց», Հրապարակում թիվ 05-10076, միայն անգլերեն)

Ծանուցում. *«Օրինական խնամակալություն» կամ «լիազորագիր» ունեցող անձինք ինքնաբերաբար ստացող ներկայացուցիչ չեն համարվում:*

Եթե դուք ստանում եք կենսաթոշակ առանց ծածկույթի աշխատանքից

Եթե դուք սկսում եք ստանալ կենսաթոշակ մի աշխատանքից, որի համար դուք չեք վճարել Սոցիալական ապահովության հարկեր՝ օրինակ, Քաղաքացիական ծառայության կենսաթոշակային համակարգից կամ որոշ նահանգային կամ տեղական կենսաթոշակային համակարգերից, ապա ձեր Սոցիալական ապահովության նպաստները կարող են չվերահաշվարկվել եւ դրանք կարող են կրճատվել: Տեղեկացրե՛ք մեզ նաեւ եթե ձեր կենսաթոշակի չափը փոփոխվում է:

Եթե դուք ամուսնանում կամ ամուսնալուծվում եք

Եթե դուք ամուսնանում կամ ամուսնալուծվում եք, ձեր Սոցիալական ապահովության նպաստները կարող են ներազդվել՝ կախված ձեր կողմից ստացվող նպաստների տեսակից:

Եթե ձեր նպաստները դադարում են ձեր ամուսնության կամ կրկնակի ամուսնության պատճառով, ապա դրանք կարող են վերսկսվել, եթե դադարի ամուսնությունը:

Հաջորդ էջի սխեման ներառնում է օրինակներ:

Եթե դուք ստանում եք.	Ապա.
Ձեր իսկ ծերության նպաստները	Ձեր նպաստները շարունակվելու են:
Ամուսնու (կնոջ) նպաստները	Ձեր նպաստները շարունակվելու են, եթե դուք ամուսնալուծվում եք եւ դուք 62 տարեկան կամ ավելի մեծ եք՝ եթե դուք ամուսնացած չէիք նվազ քան 10 տարի:
Այրի կանանց կամ այրի տղամարդկանց նպաստները	Ձեր նպաստները շարունակվելու են, եթե դուք կրկին ամուսնանաք 60 տարեկան կամ ավելի բարձր տարիքում:
Նպաստների ցանկացած այլ տեսակ	Սովորաբար, եթե դուք ամուսնանում եք, ձեր նպաստները դադարում են: Ձեր նպաստները կարող են վերսկսվել, եթե դադարի ամուսնությունը:

Եթե դուք փոփոխում եք ձեր անունը, ազգանունը

Եթե դուք փոփոխում եք ձեր անունը, ազգանունը՝ ամուսնությամբ, ամուսնալուծությամբ կամ դատարանի որոշմամբ, ապա դուք պետք է անմիջապես հայտնեք մեզ: Եթե դուք չեք տալիս մեզ այդ տեղեկատվությունը, ապա ձեր նպաստները դուրս են գրվելու ձեր հին անվամբ, եւ եթե դուք ունեք ուղղակի ավանդ, ապա վճարումները հնարավոր է, որ չհասնեն ձեր հաշվին: Եթե դուք ստանում եք չեկեր, ապա հնավոր է, որ չեք կարողանա կանխիկացնել դրանք, եթե ձեր ինքնությունը տարբերվում է չեկում նշված անունից, ազգանունից:

Եթե դուք ստանում եք նպաստներ երեխա խնամելու պատճառով

Եթե դուք ստանում եք նպաստներ մինչեւ 16 տարեկան կամ հաշմանդամ երեխա խնամելու պատճառով, ապա դուք պետք է անմիջապես տեղեկացնեք մեզ, եթե երեխան այլեւս ձեր խնամքի տակ չէ կամ փոփոխում է իր հասցեն: Տվե՛ք մեզ այն անձի անունը, ազգանունը եւ հասցեն, որի հետ ապրում է երեխան:

Ժամանակավոր բաժանումը կարող է չազդել ձեր նպաստների վրա, եթե դուք շարունակում եք իրականացնել երեխայի նկատմամբ ծնողական հսկողությունը, բայց ձեր նպաստները դադարելու են, եթե դուք երեխայի համար պատասխանատվություն չունենաք: Եթե երեխան վերադառնում է ձեր խնամքին, ապա մենք կարող ենք վերսկսել նպաստների ձեզ ուղարկումը:

Ձեր նպաստները կդադարեն, երբ ձեր խնամքի տակ գտնվող ամենափոքր չամուսնացած երեխան դառնա 16 տարեկան՝ եթե երեխան հաշմանդամ չէ: Ձեր երեխայի նպաստները կարող են շարունակվել ինչպես բացատրված է էջ 21-22-ում:

Եթե որեւէ մեկը որդեգրում է երեխայի, որը ստանում է նպաստներ

Նպաստներ ստացող երեխա որդեգրելիս, մեզ հայտնի՛ք երեխայի նոր անունը, ազգանունը, որդեգրման որոշման ամսաթիվը եւ որդեգրող ծնողի անունը, ազգանունը եւ հասցեն: Որդեգրումը նպաստները դադարելու պատճառ չի հանդիսանալու:

Եթե դուք դառնում եք ծնող նպաստներ ստանալուց հետո

Եթե դուք դառնում եք երեխայի (ներառյալ որդեգրած երեխան) ծնող նպաստներ ստանալուց հետո, տեղյակ պահե՛ք մեզ, որպեսզի մենք որոշենք, թե արդյոք երեխան իրավասու է նպաստներ ստանալու համար:

Եթե ունեք ձերբակալության չկատարված հրաման

Դուք պետք է մեզ տեղյակ պահեք, եթե Ձեր հանդեպ ձերբակալության հրաման է արձակվել՝ հետևյալ հանցագործություններից որևէ մեկի համար.

- փախուստ՝ քրեական հետապնդումից կամ ազատազրկումից խուսափելու նպատակով
- փախուստ կալանքից և
- փախուստ դեպքի վայրից

Դուք չեք կարող օգտվել այն ամսվա հաշվեգրված անաշխատունակության կանոնավոր նպաստներից կամ կուտակված գումարներից, որի ընթացքում Ձեր հանդեպ վերը նշված հանցանքներից որևէ մեկի համար ձերբակալության չկատարված հրաման կա:

Եթե դուք դատապարտված եք քրեական իրավախախտման համար

Եթե դուք ստանում եք Սոցիալական ապահովության նպաստներ եւ մեղադրվում եք հանցագործության մեջ, ապա Սոցիալական ապահովությանը պետք է անմիջապես տեղեկացնել: Սովորաբար, նպաստները չեն վճարվում անձի կալանավորման ամիսների համար, սակայն ընտանիքի բոլոր անդամները, ովքեր իրավասու են, կարող են շարունակել ստանալ նպաստները:

Եթե դուք կատարել եք հանցագործություն եւ գտնվում եք կալանավայրում

Նպաստները սովորաբար չեն վճարվում այն անձանց, ովքեր կատարել են հանցագործություն եւ գտնվում են կալանավայրում՝ դատարանի վճռով եւ հանրային հաշվին: Սա կիրառելի է, եթե անձը ճանաչվել է.

- Անմեղ անմեղսագիտակցության պատճառով կամ նմանատիպ գործոններով (ինչպիսիք են հոգեկան հիվանդությունները, հոգեկան թերությունը կամ հոգեկան անմեղսունակությունը). կամ
- Անիրավազոր դատավարությանը հանդես գալու համար:

Եթե դուք խախտում եք պայմանական-վաղաժամկետ ազատման կամ փորձաշրջանի պայմանը

Դուք պետք է հայտնեք մեզ, եթե դուք խախտում եք դաշնային կամ նահանգային օրենքով սահմանված պայմանական-վաղաժամկետ կամ փորձաշրջանի պայմանը: Դուք չեք կարող նպաստներ ստանալ այն ամսվա համար, որում դուք խախտում եք վաղաժամկետ-պայմանական ազատման կամ փորձաշրջանի պայմանը:

Միացյալ Նահանգներից հեռանալը

Եթե դուք ԱՄՆ քաղաքացի եք, ապա դուք կարող եք ճանապարհորդել կամ ապրել արտասահմանյան երկրների մեծամասնությունում՝ առանց ազդելու Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին ձեր բավարարելու վրա: Այնուամենայնիվ, կան որոշ երկրներ, որտեղ մենք չենք կարող ուղարկել Սոցիալական ապահովության վճարումներ: Այդ երկրներն են. Կամպուչիան, Կուբան, Հյուսիսային Կորեան, Վիետնամը եւ նախկին Խորհրդային Միության մեջ մտնող որոշ տարածքներ (բացի Հայաստանից, Էստոնիայից, Լիտվայից եւ Ռուսաստանից): Այնուամենայնիվ, որոշ երկրների իրավասու նպաստառուների համար կարող են արվել բացառություններ՝ բացի Կուբայից եւ Հյուսիսային Կորեայից: Այդ բացառությունների մասին լրացուցիչ տեղեկատվության համար խնդրվում է դիմել Սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակին:

Եթե դուք ԱՄՆ քաղաքացի չեք եւ վերադառնում եք Միացյալ Նահանգներում ապրելու համար, ապա դուք պետք է ներկայացնեք ձեր ոչ քաղաքացու կարգավիճակը, որպեսզի շարունակեք նպաստներ ստանալը: Եթե դուք աշխատում եք Միացյալ Նահանգներից դուրս, ապա ձեր կողմից նպաստներ ստանալու հարցը որոշելու համար կիրառվում են տարբեր կանոններ:

Եթե դուք աշխատում եք Միացյալ Նահանգներից դուրս, ապա ձեր կողմից նպաստներ ստանալու հարցը որոշելու համար կիրառվում են տարբեր կանոններ:

Լրացուցիչ տեղեկատվության համար զգաստարե՛ք մեզ եւ խնդրե՛ք *Your Payments While You Are Outside The United States* հրապարակման (*Ձեր վճարումները Միացյալ Նահանգներից դուրս եղած ժամանակ*, Հրապարակում թիվ 05-10137, հասանելի է միայն անգլերեն լեզվով) օրինակը:

Եթե քաղաքացու ձեր կարգավիճակը փոփոխվում է

Եթե դուք քաղաքացի չեք, ապա ԱՄՆ քաղաքացի դառնալու կամ ոչ քաղաքացու ձեր կարգավիճակը փոփոխվելու դեպքում, խնդրվում է հայտնել մեզ: Եթե ձեր ներգաղթի կարգավիճակը փոփոխվում է, ապա դուք պետք է մեզ տրամադրեք նոր վկայություններ, որոնք ցույց են տալիս, որ դուք շարունակում եք մնալ Միացյալ Նահանգներում օրինական հիմունքներով:

Եթե նպաստառուն մահանում է

Մեզ տեղյակ պահե՛ք Սոցիալական ապահովության նպաստներ ստացող անձի մահվան դեպքում: Մահվան ամսվա համար նպաստներ չեն վճարվում: Դա նշանակում է, որ եթե անձը մահանում է հուլիս ամսվա ընթացքում, ապա օգոստոսին ստացված չեկը (որը հուլիսի վճարումն է) պետք է վերադարձվի: Եթե օգտագործվում է ուղղակի ավանդ, ապա մահվան մասին դարձյալ հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացրե՛ք ֆինանսական հաստատությանը, որպեսզի այն կարողանա ետ վերադարձնել մահվանից հետո ստացված բոլոր վճարումները:

Նպաստներ ստացող անձի մահված դեպքում, ընտանիքի անդամները կարող են իրավասու լինել Սոցիալական ապահովության կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստներ ստանալու համար:

Եթե դուք ստանում եք Սոցիալական ապահովության եւ երկաթգծի աշխատողների ծերության նպաստներ

Եթե դուք ստանում եք եւ՛ Սոցիալական ապահովության նպաստներ եւ՛ երկաթգծի աշխատողների ծերության նպաստներ ձեր ամուսնու (կնոջ) աշխատանքի հիման վրա, ապա դուք անմիջապես պետք է տեղյակ պահեք մեզ: Դուք այլեւս իրավասու չեք լինելու երկուսն էլ ստանալու համար:

Աշխատելը եւ միեւնույն ժամանակ Սոցիալական ապահովություն ստանալը

Ինչպես է հասույթը ազդում ձեր նպաստների վրա

Դուք կարող եք շարունակել աշխատելը եւ դեռեւս ստանալ Սոցիալական ապահովության ծերության նպաստներ: Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալու ամսում (եւ դրանից հետո) ձեր հասույթը չի ազդելու ձեր Սոցիալական ապահովության նպաստների վրա: Այնուամենայնիվ, ձեր նպաստները կկրճատվեն, եթե մինչեւ ձեր լրիվ կենսաթոշակային տարիքին հասնելու ամիսների համար հասույթը գերազանցի որոշակի սահմանաչափերը: (Լրիվ կենսաթոշակային տարիքը կազմում է 66 տարի՝ 1943թ.-ից մինչեւ 1954-թ.-ը ծնված մարդկանց համար եւ աստիճանաբար աճում է մինչեւ 67-ը՝ 1960թ.-ին եւ ավելի ուշ ծնված մարդկանց համար):

- Եթե դուք լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք, ապա տարեկան սահմանաչափը (14.640 դոլար 2012թ.-ին) գերազանցող հասույթի յուրաքանչյուր 2 դոլարի համար նպաստներից կրճատվելու է 1 դոլար:
- Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը հասնելու տարում ձեր նպաստները կրճատվելու են 1 դոլարով՝ տարեկան հասույթի սահմանաչափը (38.880 դոլար 2012թ.-ին) գերազանցող վաստակած յուրաքանչյուր 3 դոլարի համար՝ մինչեւ ձեր կողմից լրիվ կիենսաթոշակային տարիքի լրանալու ամիսը: Այնուհետեւ դուք ստանում եք ձեր Սոցիալական ապահովության նպաստի վճարումը՝ անկախ նրանից, թե որքան եք դուք վաստակում:

Եթե դուք լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք եւ ձեր նպաստներից որոշ մասը պահվում է, որովհետեւ ձեր հասույթը 14.640 դոլարից ավելի է, ապա դա լավ նորություն է: Երբ դուք հասնեք լրիվ կենսաթոշակային տարիքին, ձեր նպաստները բարձրանալու են՝ հաշվի առնելով այն ամիսները, երբ դուք կամ նպաստներ չեք ստացել կամ ստացել եք կրճատված նպաստներ:

Միաժամանակ, բոլոր աշխատավարձերը, որոնք դուք ստացել եք Սոցիալական ապահովությունում գրանցվելուց հետո կարող են ավելացնել ձեր ընդհանուր միջին հասույթը եւ հնարավոր է, որ ձեր նպաստը բարձրանա:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրե՛ք *Ինչպե՞ս է Աշխատանքը Ազդում Ձեր Նպաստների* հրատարակությունը (Հրապարակում թիվ 05-10069-AM):

Հատուկ ամսական կանոնը

Երբեմն մարդիկ, ովքեր կենսաթոշակի են անցնում տարվա կեսին, արդեն իսկ ստացել են տարեկան միջին հասույթից ավելին: Այդ պատճառով գոյություն ունի հատուկ կանոն, որը կիրառվում է մեկ տարվա հասույթին՝ սովորաբար կենսաթոշակի անցնելու առաջին տարում: Այդ կանոնի համաձայն դուք կարող եք ստանալ Սոցիալական ապահովության լրիվ նպաստները որեւէ ամբողջական ամսվա համար, որում դուք վաստակել եք որոշակի սահմանից ցածր՝ անկախ ձեր տարեկան հասույթից:

2012թ.-ին լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ մարդը (66 տարի՝ 1943թ.-ից մինչեւ 1954-թ.-ը ծնված մարդկանց համար) համարվում է կենսաթոշակի անցած, եթե ամսական հասույթը կազմում է 1.220 դոլար կամ դրանից նվազ: Օրինակ Ջոն Սմիթը կենսաթոշակի է անցնում 62 տարեկանում՝ 2012թ.-ի օգոստոսի 30-ին: Մինչեւ օգոստոս ամիսը նա վաստակել է 45.000 դոլար: Սեպտեմբերից սկսած նա անցնում է մասնակի դրույքով աշխատանքի, վաստակելով 500 դոլար ամսական: Չնայած որ իր հասույթը էապես գերազանցում է 2012թ.-ի սահմանաչափը (14.640 դոլար), նա ստանալու է Սոցիալական ապահովության վճարումը սեպտեմբերից մինչեւ դեկտեմբեր ամսիների համար: Դրա պատճառն այն է, որ այդ ամիսներին իր վաստակը 1.220 դոլարից նվազ է, որը լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ մարդկանց «կենսաթոշակի անցնելու առաջին տարվա» հատուկ ամսական սահմաչափն է: Եթե ամիսներից (սեպտեմբերից մինչեւ դեկտեմբեր) որեւէ մեկում պրն. Սմիթը վաստակի 1.220 դոլարից ավելի, ապա այդ ամսվա համար նա նպաստ չի ստանալու:

Սկսած 2013թ.-ից նրա նկատմամբ կիրառվելու են միայն տարեկան սահմանաչափերը, որովհետեւ նա անցնելու է կենսաթոշակի անցնելու իր առաջին տարին եւ արդեն օգտագործած կլինի իր հատուկ ամսական կանոնը այդ տարվա համար:

Եթե դուք ինքնազբաղ եք, ապա նաեւ հաշվի է առնվում, թե արդյոք դուք շոշափելի աշխատանք եք կատարում ձեր գործարարության մեջ: Ընդհանուր առմամբ, եթե դուք որպես ինքնաբաղ աշխատում եք ամսական 45 ժամից ավելի, ապա այդ ամսվա համար դուք չեք կարողանա ստանալ նպաստներ:

Եթե դուք աշխատել եք աշխատավարձով

Աշխատատավարձը հաշվարկվում է որպես հասույթի սահմանաչափ վաստակելու, այդ չվճարվելու պահին: Եթե դուք ունեք եկամուտ, որը դուք վաստակել եք մի տարում, բայց վճարումը տեղափոխվել է հաջորդ տարվա, ապա այդ վաստակը չի հաշվարկվելու դրանք ստանալու տարվա համար: Տեղափոխված եկամուտի որոշ օրինակներ ներառնում են հիվանդության կամ արձակուրդային կուտակված վճարները, պարգեւատրումները, ֆոնդային օպցիոնները եւ տեղափոխված այլ փոխհատուցում: Եթե ձեզ աշխատավարձ են վճարում մեկ տարում այն աշխատանքի համար, որը դուք կատարել եք նախորդ տարիներին, ապա դուք պետք է դիմեք մեզ:

Մենք ունենք պայմանավորվածություն Հարկային վարչության (Internal Revenue Service, IRS) հետ, որպեսզի աշխատատուները ուղղակի ներկայացնեն որոշակի տեղափոխված փոխհատուցումները Ձեւաթուղթ W-2-ում: Այդ գումարները նշված են «non-qualified plans (ոչ որակավորված ծրագրեր)» կոչվող վանդակում: Մեր կողմից վանդակում նշված գումարը հանվելու է ընդհանուր հասույթից, որպեսզի որոշվի, թե որ հասույթն ենք մենք հաշվի առնում այդ տարվա համար:

Եթե դուք ինքնազբաղ եք

Եթե դուք ինքնազբաղ եք, ապա եկամուտը հաշվվում է այն ստանալու, այլ ոչ վաստակելու պահին՝ բացի այն դեպքերից, երբ այն վճարվում է այն տարում, երբ դուք իրավասու եք դառնում Սոցիալական ապահովության համար եւ վաստակել եք նախքան Սոցիալական ապահովության համար իրավասու դառնալը: Օրինակ, եթե դուք սկսել եք Ստանալ Սոցիալական ապահովություն 2011թ.-ի հունիսին եւ դուք որոշ գումար եք ստանում 2012թ.-ի փետրվարին այն աշխատանքի համար, որը դուք կատարել եք 2011թ.-ի հունիսին, ապա այն հաշվի չի առնվելու 2012թ.-ի հասույթի սահմանաչափի համար: Այնուամենայնիվ, եթե 2012թ.-ի փետրվարին ստացված գումարը եղել է այն աշխատանքի համար, որը դուք կատարել եք 2011թ.-ի հունիսից հետո, ապա այն հաշվի կառնվի 2012թ.-ի հասույթի սահմանաչափի համար:

Ձեր հասույթի մասին տեղեկատվություն ներկայացնելը

Քանի որ ձեր հասույթը կարող է ազդել ձեր Սոցիալական ապահովության նպաստների վրա, մենք պետք է իմանանք, թե որքան եք դուք վաստակում տարվա ընթացքում: Սովորաբար մենք այդ տեղեկատվությունը ստանում ենք.

- Այն հասույթից, որը ձեր աշխատատուն ներկայացնում է «W-2»-ում. եւ
- Ձեր ինքնազբաղության հասույթից, որը դուք ներկայացնում եք եկամտահարկի հայտարարագրից:
- Դուք պետք է մեզ ներկայացնեք ձեր հասույթը տարվա վերջից հետո, միայն եթե.
  - — Դուք իրավասու եք հատուկ ամսական կանոնի (տես էջ 17-ը) համար եւ դուք վաստակել եք ամսական սահմանաչափից նվազ (եթե այո, ապա տեղեկացրե՛ք մեզ, որպեսզի մենք կարողանաք ձեզ նպաստներ վճարել այդ ամսվա համար).
  - — «W-2»-ում նշված որոշ կամ ամբողջ հասույթը չի վաստակվել հաշվետու տարում.
  - — Ձեր աշխատավարձը սահմաչափից դուրս էր եւ դուք նաեւ ունեցել եք կորուստ ինքնազբաղության մեջ.
  - — Ձեր «W-2»-ը ցույց է տալիս է աշխատատուի կողմից ներկայացված աշխատավարձը, որը դուք ներառելու եք ինքնազբաղության հարկային հայտարարագրում (օրնակ, նախարարները);
  - — Դուք մուտքագրել եք ինքնազբաղության հարկային հայտարարագիր, բայց դուք չեք իրականացրել որեւէ ծառայություն ձեր գործով կամ դուք ներկայացրել եք ձեր հարկային հայտարարագիրը ֆինանսական տարվա հիման վրա.
  - — Դուք ագարակատեր եք եւ դուք ստանում եք դաշնային գյուղատնտեսական ծրագրի վճարումներ կամ դուք ունեք եկամուտ անցումային մշակաբույսերից. կամ
  - — Մենք պահել ենք որոշ նպաստներ, բայց դուք չունեիք որեւէ հասույթ տարվա համար կամ ձեր հասույթը եղել է նվազ, քան դուք հայտնել էիք մեզ:

Եթե մեզ պահանջվի ճշգրտել ձեր նպաստների գումարը՝ հիմնվելով ձեր հաշվետվության վրա, ապա մենք կտեղեկացնենք ձեզ: Ձեզ համար կարեւոր է, որպեսզի դուք ուսումնասիրեք

տեղեկատվությունը: Մոտավորապես տարվա կեսերին հնարավոր է, որ մենք ձեզ ուղարկենք նամակ, խնդրելով ձեզ հաշվարկել ձեր ընթացիկ եւ մոյս տարվա հասույթը: Ձեր հաշվարկները մեզ կօգնեն խուսափելու նպաստների տեսքով վճարել չափից շատ կամ քիչ:

Ծանուցում. *Եթե դուք նաեւ ստանում եք Լրացուցիչ սոցիալական եկամուտի (SSI) վճարումներ, ապա դուք պետք է ներկայացնեք ձեր ամբողջ հասույթը Սոցիալական ապահովությանը:*

Ձեր հասույթի հաշվարկը եւ ձեր նպաստները

Մենք այս տարի ճշգրտել ենք ձեր նպաստները հիմնվելով այն հասույթի վրա, որը դուք հայտնել եք մեզ որպես այս տարում ակնկալվող հասույթ:

Եթե ընտանիքի այլ անդամներ ստանում են նպաստներ ձեր աշխատանքի հիման վրա, ապա ձեր հասույթը կարող է ազդել ամբողջ ընտանիքի նպաստների վրա: Բայց, եթե դուք ստանում եք նպաստներ որպես ընտանիքի անդամ, ապա ձեր հասույթը ազդում է միայն ձեր նպաստների վրա:

Ձեր հաշվարկի վերանայումը

Ձեր աշխատելու ընթացքում դուք պետք է պահպանեք ձեր աշխատավարձի վճարման կտրոնները: Տարվա ընթացքում ցանկացած ժամանակ, եթե դուք տեսնեք, որ ձեր հասույթը տարբերվելու է ձեր հաշվարկից, դուք պետք է զանգահարեք մեզ հաշվարկը փոփոխելու համար: Սա մեզ կօգնի ձեր Սոցիալական ապահովության նպաստների գումարը ճշգրիտ պահելուն:

Այլ կարեւոր տեղեկատվություն

Այրի տղամարդկանց եւ այրի կանանց կենսաթոշակի անցնելը

Դուք կարող եք անցնել ձեր անձնական ծերության նպաստներին,եթե դրանք ավելի մեծ են, քան նրանք, որոնք դուք ստանում եք ձեր մահացած ամուսնու (կնոջ) աշխատանքի արդյունքում: Այդ նպաստները կարող են ավելի բարձր լինել արդեն իսկ 62 տարեկանում կամ հավանաբար դեռեւս 70 տարեկանում: Կանոնները բարդ են եւ տարբերվում են կախված ձեր իրավիճակից: Եթե դուք չեք խոսել Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ ձեր ծերության նպաստների

մասին (կամ ձեր հանգամանքները փոփոխվել են), ապա դիմե՛ք Սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակին՝ քննարկելու ձեր հասանելի լրացուցիչ տարբերակները:

Նպաստներ երեխաների համար

Եթե երեխան ստանում է նպաստներ ձեր աշխատանքի հիման վրա, ապա գոյություն ունեն կարեւոր բաներ, որոնք դուք պետք է իմանաք նրա նպաստների մասին.

- Երբ երեխան դառնում է 18 տարեկան
  - — Երեխայի նպաստը դադարում է նրա 18 տարեկանը լրանալու ամսին նախորդող ամսում՝ եթե երեխան կամ հաշմանդամ կամ տարրական կամ միջնակարդ դպրոցի ստացիոնար ուսուցման ուսանող է:
  - — Երեխայի 18 տարեկանը լրանալու մոտ հինգ ամիս առաջ, երեխայի նպաստը ստացող անձը ստսնալու է ձեւաթուղթ այն բացատրությամբ, թե ինչպես կարող են նպաստները շարունակվել:
  - — Երեխան, որի նպաստները դադարել են 18 տարեկանում, կարող է վերսկսել դրանք, եթե նա մինչեւ 22 տարեկանը լրանալը դառնում է հաշմանդամ կամ մինչեւ 19 տարեկանը լրանալը դառնում է տարրական կամ միջնակարդ դրպոցի ստացիոնար ուսուցման ուսանող:
- Եթե երեխան հաշմանդամ է
  - — Երեխան կարող է շարունակել նպաստներ ստանալը 18 տարեկանից հետո, եթե նա ունի հաշմանդամություն: Երեխան կարող է նաեւ բավարարել SSI-ի հաշմանդամության վճարումների պահանջներին: Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարե՛ք մեզ:
- Եթե 18 տարեկան երեխան ուսանող է
  - — Երեխան կարող է ստանալ նպաստներ մինչեւ 19 տարեկանը, եթե նա շարունակում է լինել տարրական կամ միջնակարդ դպրոցի ստացիոնար ուսուցման ուսանող: Երբ ձեր երախայի 19 տարեկանը լրանում է դպրոցական ժամկետի ընթացքում, նպաստները կարող են շարունակվել մինչեւ ժամկետի ավարտը կամ 19 տարեկանը լրանալուց հետո երկու ամսվա ընթացքում՝ որը ավելի արագ կլինի:
  - — Եթե ուսանողը դուրս է մնում դպրոցից, ստացիոնար ուսուցումից փոխադրվում է ոչ ստացիոնար հաճախումների, վճարվում է կամ դադարեցվում է նրա

ուսուցումը կամ նա փոխում է դպրոցը, ապա Սոցիալական ապահովությունը պետք է անմիջապես տեղեկացվի:

— Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին եւ ավարտին մենք յուրաքանչյուր ուսանողի ուղարկում ենք ձեւաթուղթ: Եթե մենք չենք ստանում ձեւաթուղթը նպաստները կարող են դադարեցվել:

— Ուսանողը կարող է շարունակել նպաստների ստանալը արձակուրդների ժամանակ չորս կամ նվազ ամիսների ընթացքում՝ եթե նա արձակուրդների ավարտին նախատեսում է վերադառնալ դպրոցի ստացիոնար ուսուցմանը:

— Ընդհանուր առմամբ, դպրոց հաճախելը դադարեցնող ուսանողը կարող է կրկին նպաստներ ստանալ, եթե նա մինչեւ 19 տարեկանը վերադառնում է դպրոցի ստացիոնար ուսուցմանը: Նպաստների համար վերադիմելու համար ուսանողը պետք է մեզ դիմի:

- Ինչպես է ամուսնալուծությունը ազդում է խորդ երեխայի նպաստների վրա

— Եթե խորդ երեխան ստանում է նպաստներ ձեր աշխատանքի հիման վրա եւ դուք եւ երեխայի ծնողը ամուսնալուծվում եք, ապա խորդ երեխայի նպաստները դադարելու են ամուսնալուծությունը վերջնական դառնալուց մեկ ամիս հետո: Ամուսնալուծությունը վերջնական դառնալուն պես դուք անմիջապես պետք է մեզ տեղյակ պահեք:

Լրացուցիչ սննդի աջակցության ծրագիր (պարենային կտրոններ)

Դուք կարող եք հնարավորություն ունենալ՝ նախկինում որպես պարենային կտրոններ հայտնի՝ Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրից (SNAP) օգնություն ստանալու: Դիմելու կարգը նկարագրված է ***www.fns.usda.gov/snap*** կայքէջում: Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք *Nutrition Assistance Programs* (*Սննդի աջակցության ծրագրեր*», Հրապարակում թիվ 05-10100, միայն անգլերեն) կամ *Փաստեր՝ Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրի մասին* (Հրապարակում թիվ 05-10101-AM) հրապարակումը:

Արդյո՞ք դուք կարող եք SSI ստանալ:

Եթե դուք ունեք սահմանափակ եկամուտ եւ միջոցներ, ապա ձեզ կարող է օգնել SSI-ը: SSI-ը մեր կողմից կառավարվող դաշնային ծրագիր է: Այն ֆինանսավորվում է ընդհանուր եկամուտներից, ոչ Սոցիալական ապահովության հարկերից:

SSI-ը վճարում է ամսական չեկեր այն մարդկանց, որքեր 65 տարեկան կամ ավելի մեծ են, կամ ովքեր կույր կամ հաշմանդամ են: Եթե դուք ստանում եք SSI, ապա դուք կարող եք ստանալ այլ նպաստներ նույնպես՝ ինչպիսինն է Medicaid-ը, SNAP-ը եւ սոցիալական այլ ծառայությունները:

SSI-ի համար ձեր իրավասությունը որոշելիս, որոշ միջոցներ եւ որոշ եկամուտ մենք հաշվի չենք առնում: Օրինակ, ձեր տունը եւ ձեր մեքենան սովորաբար հաշվի չեն առնվում որպես միջոցներ: Լրացուցիչ տեղեկատվության կամ SSI-ի համար դիմելու նպատակով զանգահարե՛ք մեզ:

Եթե դուք համաձայն չեք մեր կողմից ընդունված որոշման հետ

Եթե դուք ունեք հարցեր կապված ձեր վճարման գումարի կամ մեր կողմից ձեզ ուղարկվող տեղեկատվության հետ, դիմե՛ք մեզ:

Եթե համաձայն չեք մեր կողմից ընդունված որոշմանը, ապա դուք իրավունք ունեք խնդրելու, որպեսզի այն վերանայվի: Ձեր խնդրանքը պետք է լինի գրավոր եւ մուտքագրվի Սոցիալական ապահովության որեւէ գրասենյակում՝ ձեր կողմից բողոքարկվող նամակը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում:

Եթե դուք դեռեւս բավարարված չեք, ապա դուք կարող եք ձեռնարկել հետագա քայլերը: Խնդրե՛ք *Ձեր իրավունքը հետաքննելու ձեր հարցապնդման վերաբերյալ ընդունված որոշումը* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-10058-AM):

Ներկայացուցիչ ունենալու Ձեր իրավունքը

Դուք կարող եք անձամբ բողոքարկել՝ Սոցիալական ապահովության վարչության անվճար օգնությամբ, կամ կարող եք օգտվել ներկայացուցչի օգնությունից: Մենք Ձեզ տեղեկություն կտրամադրենք այն կազմակերպությունների մասին, որոնք կարող են օգնել Ձեզ ներկայացուցիչ գտնել:

Ներկայացուցիչ ընտրելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք *Ներկայացուցիչ ունենալու Ձեր իրավունքը* (Հրապարակում թիվ 05-10075-AM) հրապարակումը:

Ձեր անձնական տեղեկատվության պաշտպանությունը

Դուք Սոցիալական ապահովության քարտը դուք պետք է պահեք ապահով տեղում՝ ձեր կարեւոր այլ փաստաթղթերի հետ: Մի՛ պահեք այն ձեզ մոտ, եթե դուք այն չպետք է ցույց տաք աշխատատուի կամ ծառայություն մատուցողի:

Սոցիալական ապահովությունը պահում է անձնական եւ գաղտնի տեղեկատվություն՝ անուններ, ազգանուններ, Սոցիալական ապահովության համարներ, հասույթի հաշվառում, տարիքներ եւ նպաստառուների հասցեներ՝ միլիոնավոր մարդկանց համար: Երբ դուք զանգահարեք կամ այցելեք եք մեզ, մենք ձեզ տալու ենք մի քանի հարց՝ ձեր ինքնությունը ճշտելու համար: Եթե դուք ցանկանաք Սոցիալական ապահովության հարցերով ստանալ այլ անձի օգնությունը, ապա մեզ անհրաժեշտ է ստանալ ձեր թույլտվությունը, որպեսզի քննարկվի այդ անձի հետձեր տեղեկատվությունը:

Մենք պնդում ենք, որպեսզի զգույշ լինեք ձեր Սոցիալական ապահովության համարի հարցում եւ հնարավորության սահմաններում պահպանեք դրա գաղտնիությունը:

Մենք պատրաստ ենք պաշտպանելու ձեր հաշվառման փաստաթղթերի գաղտնիությունը: Երբ օրենքով մեզանից պահանջվում է տեղեկատվություն տալ կառավարական այլ գործակալություններին, որոնք վարում են առողջապահական կամ սոցիալական ապահովության ծրագրեր, ինչպիսիք են Medicaid-ը եւ SNAP-ը, ապա այդ գործակալություններին թույլատրելի չէ կիսվելու այդ տեղեկատվությամբ որեւէ այլ անձի հետ:

Խոսք Medicare-ի մասին

Medicare-ը 65 տարեկան եւ ավելի մեծ մարդկանց համար բժշկական ապահովագրության ծրագիր է: Հաշմանդամները կամ այն մարդիկ, ովքեր ունեն խրոնիկ երիկամային անբավարարություն կամ ունեն երիկամների կողային ամիոտրոֆիկ սկլերոզ (Լու Գեհրիգի հիվանդություն) ցանկացած տարիքում կարող են ստանալ Medicare:

Medicare-ը կազմված է չորս մասից

- Հիվանդանոցային ապահովագրություն (Մաս A), որն օգնում է վճարելու ստացիոնար հիվանդանոցային սպասարկման եւ որոշակի ետ-հիվանդանոցային ծառայությունների համար.
- Բժշկական ապահովագրություն (Մաս B), որն օգնում է վճարելու բժիշկների ծառայությունների, ամբուլատոր հիվանդանոցային սպասարկման եւ բժշկական այլ ծառայությունների համար:
- Medicare-ի շահավետ ծրագրերը (Մաս C) մատչելի են բազում տարածքներում: Medicare-ի Մաս A եւ B ունեցող մարդիկ կարող են նախընտրել, որպեսզի իրենց բժշկական սպասարկման բոլոր ծառայությունները ստանան Մաս C-ով ծառություններ մատուցող կազմակերպության միջոցով:
- Դեղատոմսով բաց թողնվող դեղերի ծածկույթը (Մաս D) օգնում է վճարել բժիշկների կողմից բժշկական բուժման համար նշանակվող դեղորայքի համար վճարելու համար:

Ով է իրավասու հիվանդանոցային ապահովագրության համար (Մաս A):

Մարդկանց մեծ մասը ստանում է հիվանդանոցային ապահովագրություն, երբ դառնում է 65 տարեկան: Դուք ինքնաբերաբար բավարարում եք դրա պահանջներին, եթե իրավասու եք Սոցիալական ապահովության կամ Երկաթուղու աշխատողների ծերության նպաստներ ստանալու համար: Կամ դուք կարող եք բավարարել պահանջներին ձեր ամուսնու (կնոջ) (ներառյալ ամուսնալուծված ամուսնու [կնոջ]) աշխատանքի հիման վրա: Մյուսները բավարարում են պահանջներին, որովհետեւ նրանք կառավարական աշխատողներ են, որոնք ընդգրկված չեն Սոցիալական ապահովությամբ, որը վճարում է Medicare-ի հարկ:

Եթե դուք 24 ամսվա ընթացքում ստանում եք Սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստ, ապա դուք կբավարարեք հիվանդանոցային ապահովագրության համար:

Եթե դուք ստանում եք հաշմանդամության նպաստներ, քանի որ դուք ունեք երկրորդական ամիոտրոֆիկ սկլերոզ (Լու Գեհրիգի հիվանդություն), ապա պահանջներին բավարարելու համար դուք չպետք է սպասեք 24 ամիս:

Նաեւ մարդիկ, որոնք տառապում են խրոնիկ երիկամային անբավարարությամբ, որը պահանջում է պահպանող դիալիզ կամ՝ երիկամների պատվաստում, բավարարում են հիվանդանոցային ապահովագրության պահանջներին, եթե նրանք բավականաչափ երկար աշխատել են կամ եթե նրանք հանդիսանում են պահանջներին բավարարող աշխատողի ամուսինը (կինը) կամ երեխան:

Ո՞վ կարող է ստանալ բժշկական ապահովագրություն (Մաս B):

Գրեթե յուրաքանչյուրը, ով բավարարում է հիվանդանոցային ապահովագրության պահանջներին, կարող է գրանցվել բժշկական ապահովագրության համար: Մաս B-ն ոչ պարտադիր ծրագիր է: Դա անվճար չէ: 2012թ.-ին ամսական ապահովագրավճարը կազմում է 99,90 դոլար/ամիս: Ավելի բարձր եկամուտներ ունեցող որոշ մարդիկ վճարելու են ավելի բարձր ապահովագրավճարներ:

Ո՞վ կարող է ստանալ Medicare ծահավետ պլաններ (Մաս C):

Ցանկացած մարդ, ով ունի Medicare հիվանդանոցային ապահովագրություն (Մաս A) եւ բժշկական ապահովագրություն (Մաս B) կարող են ընդգրկվել Medicare-ի շահավետ ծրագրում: Medicare-ի շահավետ ծրագրերը ընդգրկում են.

- Medicare-ի կողմից կառավարվող ծրագրեր.
- Medicare-ի կողմից նախապատվելի ծառայություններ մատուցող կազմակերպության («PPO») ծրագրեր.
- Medicare մասնավոր «վճար ծառայության դիմաց» ծրագրեր. եւ
- Medicare մասնագիտական ծրագրեր:

Հնարավոր է, որ պետք է վճարեք ամսական ապահովագրավճար՝ Medicare շահավետ ծրագրի կողմից առաջարկվող հավելյալ նպաստների պատճառով:

Ո՞վ կարող է ստանալ Medicare-ի դեղատոմսով բաց թողնվող դեղերի ծածկույթը (Մաս D):

Ցանկացած մարդ, ով ունի Medicare հիվանդանոցային ապահովագրություն (Մաս A) կամ բժշկական ապահովագրություն (Մաս B) կամ Medicare-ի շահավետ ծրագիր (Մաս C) կարող է իրավասու լինել դեղատոմսով բաց թողնվող դեղերի ծածկույթի (Մաս D) համար: Դեղատոմսով բաց թողնվող

դեղերի ծրագիրը պարտադիր չէ եւ ծածկույթի համար դուք վճարում եք լրացուցիչ ամսական ապահովագրավճարներ: Ավելի բարձր եկամուտներ ունեցող որոշ մարդիկ վճարելու են ավելի բարձր ապահովագրավճարներ:

Լրացուցիչ տեղեկատվության համար դիմե՛ք մեզ եւ խնդրե՛ք *Medicare* հրապարակումը (Հրապարակում թիվ 05-10043-AM):

Medicare-ի ծախսերի հետ կապված օգնությունը ցածր եկամուտ ունեցող մարդկանց համար

Եթե դուք ունեք ցածր եկամուտ եւ սակավ միջոցներ, ապա ձեր նահանգը կարող է վճարել Medicare-ի ձեր ապահովագրավճարները, իսկ որոշ դեպքերում, բժշկական «կանխիկ» այլ ծախսերը, ինչպիսինն են ֆրանշիզաները եւ համատեղ ապահովագրությունը:

Միայն ձեր նահանգը կարող է որոշել, թե արդյոք դուք բավարարում եք սույն ծրագրով օգնություն ստանալու համար: Եթե դուք կարծում եք, որ բավարարում եք, ապա դիմե՛ք ձեր նահանգային կամ տեղական բժշկական օգնության (Medicaid) գործակալությանը, սոցիալական ծառայություններին կամ սոցիալական ապահովության գրասենյակներին:

«Լրացուցիչ օգնություն» Medicare-ի դեղատոմսով բաց թողնվող դեղերի հետ կապված ծախսերի համար

Եթե դուք ունեք սահմանափակ եկամուտ եւ միջոցներ, ապա դուք կարող եք բավարարել հավելյալ օգնության պահանջներին, որպեսզի վճարեք դեղատոմսով բաց թողնվող դեղերի համար Medicare-ի Մաս D-ով: Սոցիալական ապահովության դերն է օգնելու ձեզ հասկանալ, թե ինչպես դուք կարող եք բավարարել պահանջների եւ օգնել ձեզ հավելյալ օգնության համար դիմումը մշակելու հարցում: Տեսնելու, թե արդյոք դուք բավարարում եք պահանջներին, զանգահարե՛ք Սոցիալական ապահովության անվճար հեռախոսահամարով կամ այցելե՛ք մեր վեբ կայքը:

www.socialsecurity.gov

Social Security Administration
SSA Publication No. 05-10077-AM
What You Need To Know When You Get
Retirement Or Survivors Benefits (Armenian)
January 2012